Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՄԱՆ

Հոդված 4. Ձերբակալվածներին պահելու վայրերը և կալանավորվածներին պահելու վայրերը

Ձերբակալվածներին պահելու վայրերը և կալանավորվածներին պահելու վայրերը գործում են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինների կառուցվածքներում:

(մասն ուժը կորցրել է 15.06.22 ՀՕ-249-Ն)

Ձերբակալվածներին պահելու վայրերի շինության և կահավորման առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ձերբակալվածներին պահելու վայրերը և կալանավորվածներին պահելու վայրերը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

(4-րդ հոդվածը լրաց. 15.11.06 ՀՕ-177-Ն, փոփ. 15.06.22 ՀՕ-249-Ն)